



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

### ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կանոնադրության 16.4-րդ կետի պահանջները,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի անդամ **Տարոն Վարդանի Սիմոնյանը** (արտոնագիր № 1092) գրավոր դիմում է ներկայացրել արտոնագիրը կասեցնելու և խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ ընտրվել է Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման ազգային ժողովի պատգամավոր,

հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի 21.01.2019թ. թիվ 2/7-Ա որոշմամբ փաստաբան Տարոն Վարդանի Սիմոնյանի փաստաբանական գործունեության թիվ 1092 արտոնագրի գործողությունը կասեցվել է,

նկատի ունենալով այն, որ Պալատի խորհրդի անդամ ներգրավվելու վերաբերյալ 23.01.2019 թվականից սկսած գրավոր առաջարկներ են ներկայացվել Պալատի խորհրդի 2017թ. ընտրությանը վարկանիշային հաջորդականությամբ առավել «կողմ» ձայներ ստացած փաստաբաններ Գևորգ Գյոզայանին, Երվանդ Վարոսյանին, Ռուբեն Սահակյանին, Լիպարիտ Սիմոնյանին, Լուսինե Սահակյանին, Տիգրան Աթանեսյանին և Ալեքսանդր Սիրունյանին, որոնք հրաժարվել են և/կամ սահմանված ժամկետում չեն ներկայացրել որպես խորհրդի անդամ ներգրավվելու վերաբերյալ գրավոր համաձայնություն,

հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի անդամ ներգրավվելու վերաբերյալ 20.03.2019թ. գրավոր առաջարկ է ներկայացվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2017թ. ընտրությանը վարկանիշային հաջորդ առավել՝ 203 «կողմ» ձայներ ստացած փաստաբան **Գայանե Ասատուրի Դեմիրջանին** (արտոնագիր № 1881), որը 01.04.2019թ. որպես Պալատի խորհրդի անդամ ներգրավվելու գրավոր համաձայնություն է տվել,

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

**1. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Տարոն Վարդանի Սիմոնյանի լիազորությունները համարվում են դադարեցված 2019 թվականի հունվարի 21-ից:**

**2. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 12.02.2017թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած և որպես ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ներգրավվելու**

03 ապրիլի 2019թ.

թիվ 139-Ա

**համաձայնություն ներկայացրած փաստաբան Գայանե Ասատուրի Դեմիրջյանը (203 ձայն, 16-րդ տող) 2019 թվականի ապրիլի 2-ից (գրավոր համաձայնությունը ներկայացնելու հաջորդ օրվանից) համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կազմում Տարոն Սիմոնյանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**03 ապրիլի 2019թ.  
թիվ 139-Ա  
ք. Երևան**